



Վ Ե Ի Ռ

Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

10.10.2012թ.

ք.Իջևան

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով

ճախագահությամբ՝ դատավոր Արման Կուրեխյանի

քարտուղարությամբ՝ Համեստ Չիրուխյանի
մասնակցությամբ. դիմող՝ Արա Սիմոնյանի
անձն. AA 0317994, տրվ. 23.02.1996թ., 004
ներկայացուցիչ՝ Կարեն Ղալունյանի

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ դիմումի Արա Ալեքսանդրի Սիմոնյանի /այսուհետ նաև՝ Դիմող/ ժառանգության ընդունման փաստը հաստատելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական ճախապատմությունը

Արա Ալեքսանդրի Սիմոնյանը 02.05.2012թ. դիմում է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ժառանգության ընդունման փաստը հաստատելու պահանջի մասին: 03.05.2012թ. դիմումն ընդունվել է վարույթ, գործի քննությունը նշանակվել է 01.06.2012թ., Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Իջևան քաղաքի նստավայրում:

Գործի քննության ընթացքում դատարանի որոշմամբ Իջևան համայնքը և Տավուշի մարզպետարանը ներգրավվել են որպես ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք:

Դիմողի իրավական դիրքորոշումը

Դիմելով դատարան Ա.Սիմոնյանը հայտնել է, որ 20.03.1978թ. մահացել է իր պապը՝ Մարտին Կարապետի Սիմոնյանը: Մահը գրանցված է Իջևան համայնքի ՔԿԱԳ տարածքային բաժնում և տրվել մահվան վկայական: Մահից հետո պապին պատկանած 508քմ մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ բացվել է ըստ կտակի ժառանգություն: Հանդիսանալով Մարտին Կարապետի Սիմոնյանի ըստ կտակի ժառանգը՝ այն ընդունելու մասին համապատասխան հայտարարությամբ թեև չի դիմել տարածքի նոտարական գրասենյակ, սակայն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքում ընդունել է փաստացի տիրապետելու և կառավարելու եղնակով՝ վերանորոգել է ցանկապատը, դրա վրա բնակելի տուն կառուցելու համար տեղափոխել է շինանյութ և կատարել որոշակի շինարարական աշխատանքներ: Ժառանգատուի մահից հետո մինչև օրս հարևանությամբ բնակվող անձանց, ազգականների և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ինքն ընկալվում է ինչպես Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 61 և 63 տնատիրությունների սահմանակից ընդամենը 506քմ մակերես ունեցող միակ իրավատեր և գույքը 20.03.1978թ. ի վեր գտնվում է նրա փաստացի տիրապետության տակ: Այժմ, երբ ինքն իր ժառանգական իրավունքն իրացնելու՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու նպատակով դիմում է տարածքի նոտարական գրասենյակ, տարածքի նոտարը մերժում է դիմումը՝ պատճառաբանելով, թե բաց է թողել ժառանգություն ընդունելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը: Այսպիսով դիմողի համար սահմանափակվում է

ժառանգման հիմքով ծագած սեփականության իրավունքն իրացնելու իրական և իրավական հնարավորությունը:

Դիմողը դատարանին խնդրել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղանքի կադաստրային քարտեզում 11-001-112-026 թվով ծածկագրված հողամասի նկատմամբ 20.03.1978թ. բացված ըստ կտակի ժառանգությունն ընդունել է փաստացի տիրապետելու եղանակով:

Գործի քննության ընթացքում Դիմողի ներկայացուցիչը պնդել է դիմումը:

Գործի համար նշանակություն ունեցող փաստերը

1. Մարտին Կարապետի Սիմոնյանը 29.12.1972թ. իր ամբողջ շարժական և անշարժ գույքը, ինչից էլ որ բաղկացած լինի և որտեղ էլ որ գտնվի, կտակել է Արա Ալեքսանդրի Սիմոնյանին: Կտակը չի փոփոխվել և չի վերացել:
2. Մարտին Կարապետի Սիմոնյանը մահացել է 20.03.1978թ.:
3. Մարտին Կարապետի Սիմոնյանի մահից հետո «Իջևան» նոտարական տարածքում ժառանգություն չի ձևակերպվել: Նրա մահից հետո ըստ կտակի ժառանգության իրավունքները ձևակերպելու համար Արա Սիմոնյանի դիմումը մերժվել է, ժառանգությունն ընդունելու վեցամսյա ժամկետի բացթողման պատճառով:
4. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 26.07.2012թ. տեղեկանքի համաձայն՝ 11-001-112-026 ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքներ չկան:

Կիրառելի իրավունք

Դատարանը գտնում է, որ սույն գործով կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածները:

Դատարանի իրավական վերլուծությունները

Լսելով Դիմողի ներկայացուցչին, հետազոտելով և գնահատելով գործում առկա գրավոր ապացույցները՝ դատարանը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանը հաստատված է համարում, որ Մարտին Կարապետի Սիմոնյանը 29.12.1972թ. իր ամբողջ շարժական և անշարժ գույքը, ինչից էլ որ բաղկացած լինի և որտեղ էլ որ գտնվի, կտակել է Արա Ալեքսանդրի Սիմոնյանին: Կտակը չի փոփոխվել և չի վերացվել: Մարտին Կարապետի Սիմոնյանը մահացել է 20.03.1978թ.: Նշված փաստերը հաստատվեցին գործում առկա կտակով և մահվան վկայականի կրկնօրինակով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքի կանոններով: Նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Սույն գործի համար էական նշանակություն ունի և ապացուցման ենթակա է 11-001-112-026 ծածկագրով հողամասը Մարտին Սիմոնյանի ժառանգական զանգվածում ներառված լինելու փաստը:

Դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր, որ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղանքի կադաստրային քարտեզում ներկայումս 11-001-112-026 ծածկագրով գրանցված հողամասը սահմանված կարգով հատկացված է եղել Մարտին Կարապետի Սիմոնյանին: Ինչ

վերաբերում է Դիմողի կողմից ներկայացրած Հայաստանի ազգային արխիվի Տավուշի մարզային մասնաճյուղի 07.09.2010թ. թիվ 225 արխիվային տեղեկանքին, ըստ որի՝ Իջևանի կոլտնտեսության 1956թ. հողային գրքի 178 կարգայի համարի տակ Մարտին Կարապետի Սիմոնյանի անվամբ գրանցված է 0.24հա տնամերձ հողամաս, ապա դրանով ինքնին չի ապացուցվում այն փաստը, որ Մարտին Սիմոնյանին տրամադրված հողամասը ներմայումս հենց 11-001-112-026 ծածկագրով գրանցված հողամասն է, քանի որ բացակայում են հողամասի նույնականացման համար անհրաժեշտ տվյալները: Նույն պատճառաբանությամբ, այդ փաստը չի հաստատվում նաև գործում առկա, 30.08. /տարեթիվը նշված չէ/ ակտով:

Գործի քննության ընթացքում պարզվել է, որ 11-001-112-026 ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքներ և այլ տվյալներ չկան, այն չի հանդիսանում համայնքային կամ պետական սեփականություն, որպիսի փաստերը հաստատվեցին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 26.07.2012թ. տեղեկանքով, Իջևանի քաղաքապետարանի 17.07.2012թ. թիվ 337 գրությամբ և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Տավուշի մարզային ստորաբաժանման 04.09.2012թ. գրությամբ:

ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողերը պետության սեփականությունն են:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ Դիմողը չի ապացուցել անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղանքի կադաստրային քարտեզում 11-001-112-026 թվով ծածկագրված հողամասը Մ.Սիմոնյանի ժառանգական զանգվածում ներառված լինելու փաստը, ուստի այդ հողամասի նկատմամբ 20.03.1978թ. բացված ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետելու եղանակով ընդունելու փաստը հաստատելու պահանջը հիմնազուրկ է:

Ինչ վերաբերում է Իջևանի քաղաքապետարանի 22.09.2010թ. տեղեկանքին, համաձայն որի՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 61 և 63 տնատիրություններին սահմանակից 506քմ մակերեսով հողամասին հետևում և տիրություն է անում Մարտին Սիմոնյանի թոռը՝ Արա Սիմոնյանը, և Լիանա Խոջումյանի ու Ռուբեն Տիգրանյանի հայտարարություններին, որ Մ.Սիմոնյանի մահից հետո մինչ օրս Արա Սիմոնյանը տիրություն է անում հողամասին, վարում, ցանում և խնամում է ծառերը, հնձում ու հավաքում է բերքը, ապա դատարանը գտնում է, որ հողամասը Մ.Սիմոնյանի ժառանգության զանգվածում ներառված լինելու փաստն ապացուցված չլինելու պայմաններում վերը նշված տեղեկանքը և հայտարարությունները չեն կարող հիմք հանդիսանալ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին դատարանը գտնում է, որ Դիմողի կողմից սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելու պայմաններում այն պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 193 և 140 հոդվածներով դատարանը

Վ Ե Ռ Ե Ց

Արա Ալեքսանդրի Սիմոնյանի դիմումը՝ ժառանգության ընդունման փաստը հաստատելու պահանջի մասին մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, այն հրապարակելու պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դ Ա Տ Ա Վ Ա Ր

Ա.ԿՈՒՐԵՆՅԱՆ

